Արվեստի, զբոսաշրջության անտառպուրակային համալիր կենտրոնի ստեղծում

Ծրագրի նկարագիր

Ծրագրի նպատակն է Երևանում ստեղծել ժամանակակից չափորոշիչներին համապատասխանող մշակութային և զբոսաշրջության կենտրոն:
Դալմայի այգիներին հարակից տարածքում նախատեսվում է ստեղծել անտառպուրակային հանգստի և ժամանցի համալիր, որտեղ կլինեն կենսաբազմազանության ցուցադրության գոտի, այգիներ և ճեմուղիներ, մանկական ժամանցի գոտի, հեծանվուղի, լանդշաֆտային ազատ հանգստի և հասարակական սննդի օբյեկտների համար նախատեսված գոտիներ: Նախատեսվում է նաև «Արթսիթի» արվեստի կենտրոնի ստեղծում՝ ժամանակակից արվեստի թանգարան, պատկերասրահ, առանձնատներ արվեստագետների համար: Յուրաքանչյուր առանձնատանը նախատեսված է բնակելի հատված և արհեստանոց՝ բնական ընդարձակ լուսավորությամբ: Առանձնատների սեփականատերերը հնարավորություն կունենան ցուցադրել և վաճառել իրենց ստեղծագործությունները, ինչպես նաև դրանք ներկայացնել ժամանակակից արվեստի թանգարանում և պատկերասրահում: «Արթսիթի» կենտրոնի բացօթյա տարածքներում կկազմակերպվեն քանդակների և արվեստի այլ գործերի ցուցադրություններ, մշակութային կյանքին վերաբերող այլ միջոցառումներ:



ՕՏԱՐՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏԵՂԱԲԱԽՇՄԱՆ ԳԾԱՊԱՏԿԵՐ

Տեխնիկական ցուցանիշներ

Համալիր կենտրոնի ընդհանուր մակերեսը կազմում է 250 հա:



Արվեստի, զբոսաշրջության անտառպուրակային համալիր կենտրոնի ստեղծում

Ծրագրի ժամկետներ	3 տարի
Ծրագրի արժեքը	Շուրջ 80 մլն ԱՄՆ դոլար:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել մասնավոր ներդրումների ներգրավմամբ: Երևանի քաղաքապետարանը ներդրողին կաջակցի հողատարածքների իրավական կարգավիճակի մասին տեղեկատվության տրամադրման, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման գործում: Երևանի քաղաքապետարանը կդիտարկի նաև հողատարածքների օգտագործման վարձավճարների արտոնյալ կարգի հաստատման հնարավորությունը և պայմանները: Երևանի քաղաքապետարանը կաջակցի նաև իրացման ծրագրի կազմման և գործընթացի կազմակերպման գործում:

Ներդրումների ձևը և հիմնական պայմանները

Ներկա իրավիճակ	Առկա հայեցակարգային նախագիծ, էսքիզներ: